ՍԴ/0085/01/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10 հունվարի 2022 թվական ք.Երևան

ուսումնասիրելով Հովհաննես Պետրոսի Սաֆարյանի վերաբերյալ թիվ ՍԴ/0085/01/21 քրեական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի դեկտեմբերի 1-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 41158721 քրեական գործն ըստ մեղադրանքի Հովհաննես Պետրոսի Սաֆարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, և 6-րդ կետերով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 263-րդ հոդվածի 2-րդ մասով, որին շնորհվել է ՍԴ/0085/01/21 համարը:

2. 2021 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է դատավոր Ն.Օհանյանի վարույթ:

3. 2021 թվականի դեկտեմբերի 13-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Օհանյանի որոշմամբ թիվ

ՍԴ/0085/01/21 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, և 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել դատավոր Հ.Մանուկյանի վարույթ:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Մանուկյան), 2021 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ, գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար, դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հունվարի 3-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Հովհաննես Սաֆարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«[Ն]ա լինելով տասնութ տարին լրացած անձ, (…) 2021 թվականի հունիսի 11-ից 12-ն ընկած ժամանակահատվածում, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ պարբերաբար անառակաբարո գործողություններ է կատարել ակնհայտ տասնչորս տարին չլրացած անչափահասի նկատմամբ: (…)*

Բացի այդ, Հովհաննես Սաֆարյանը Դավիթ Սահակյանի (…) անչափահաս [դստեր] (…) մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով Դ.Սահակյանից պահանջել է կատարել գույքային բնույթի գործողություններ (…):

Այնուհետև լինելով տասնութ տարին լրացած անձ, (…) 2021 թվականի հուլիսի սկզբին, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ, պարբերաբար անառակաբարո գործողություններ է կատարել տասներկու տարին չլրացած (…) [անչափահասի] նկատմամբ:

Բացի այդ, Հովհաննես Սաֆարյանը Ռազմիկ Ոսկանյանի և նրա (…) անչափահաս եղբոր (…) մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով Ռ.Ոսկանյանից պահանջել է կատարել գույքային բնույթի գործողություններ:

(…)

Բացի այդ, Հովհաննես Սաֆարյանը համացանցի միջոցով Ռազմիկ Ոսկանյանից ստանալով մանկական պոռնկագրական նյութեր հանդիսացող (...) տեսագրությունները պահպանել է համակարգչային համակարգ հանդիսացող՝ «Samsung Galaxy A12» մոդելի (...) բջջային հեռախոսում, որը հայտնաբերվել է 2021 թվականի հուլիսի 15-ին՝ վերջինիս ոստիկանության Կապանի բաժին բերման ենթարկելիս կատարված անձնական խուզարկությամբ (...)»:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) Դատարանը փաստում է, որ համաձայն քրեական գործի նյութերի՝ Հովհաննես Սաֆարյանը մեղսագրված հանցագործությունները կատարել է, երբ գտնվել է բնակության վայրում՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սիսվանի փողոցի թիվ 60 տանը: Ավելին, դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրված հանցագործությունների հանցակազմը ձևական է, այսինքն՝ ավարտված են համարվում օբյեկտիվ կողմի գործողությունները կատարելու պահից, հետևաբար՝ նշված հանցագործությունները ավարտվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում (...)»:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Չնայած այն հանգամանքին, որ վկայակոչված որոշմամբ նշված չէ, թե գործի նյութերի որ փաստական տվյալով է հիմնավորվում, որ Հովհաննես Սաֆարյանը իրեն մեղսագրված արարքները ենթադրաբար կատարելիս գտնվել է իր բնակության վայրում, սակայն հարկ է նշել, որ գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թե՛ առաջադրված մեղադրանքի ծավալում, թե՛ գործով ձեռք բերված ապացույցներում առկա չեն այնպիսի տվյալ(ներ), որն ակնհայտորեն կվկայեր այն մասին, որ Հովհաննես Սաֆարյանն իրեն մեղսագրված արարքները ենթադրաբար կատարելիս գտնվել է Երևան քաղաքում կամ իր բնակության վայրում՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սիսվանի փողոցի թիվ 60 տանը:*

Թեև այս կապակցությամբ ավելի խորապես դատողություններ կատարելու համար անհրաժեշտ է գործի նյութերի ամբողջական հետազոտում, սակայն Դատարանը բացի այս հանգամանքից հարկ է համարում անդրադառնալ նաև այն

հանգամանքին, որ Հովհաննես Սաֆարյանին մեղադրանք է առաջադրվել, ի թիվս այլնի, նաև ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ արարքի կատարման համար (…):

(…) Վկայակոչած իրավանորմի դիսպոզիցիայից առերևույթ կարելի է հասկանալ, որ սույն հանցագործությունը դասվում է տևող հանցագործությունների շարքին: Այսինքն՝ ավարտված է համարվում անձի կողմից մեղայականով ներկայանալու կամ իրավապահ մարմինների կողմից նրա հայտնաբերման կամ այլ հանգամանքներով պայմանավորված՝ արարքը դադարելու պահից:

Հատկանշական է այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքով մեղսագրված արարքի կատարումն ավարտվել է Կապան քաղաքում, քանի որ Հովհաննես Սաֆարյանը բերման է ենթարկվել նույն քաղաքի ոստիկանության բաժին, որտեղ էլ վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեղադրանքի հիմքում դրված համակարգչային համակարգ հանդիսացող «Samsung Galaxy A12» մոդելի (…) բջջային հեռախոսը:

Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված հոդվածով Հովհաննես Սաֆարյանին սույն քրեական գործով մեղադրանք է առաջադրվել նրա կողմից ժամանակագրական առումով ենթադրաբար վերջին արարքի կատարման համար (…)»:

9. Ըստ բերման ենթարկելու արձանագրության՝ Հովհաննես Սաֆարյանը 2021 թվականի հուլիսի 15-ին Կապան քաղաքի Գ.Նժդեհ փողոցի 22-րդ շենքի մոտակայքից բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Կապանի բաժին և նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է «Samsung Galaxy A12» մոդելի բջջային հեռախոսը[1]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *թիվ ՍԴ/0085/01/21 քրեական գործն ըստ*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 74:

մեղադրանքի՝ Հովհաննես Սաֆարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, և 6-րդ կետերով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 263-րդ հոդվածի 2-րդ մասով, ընդդատյա՞ է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

11.1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[2]:

12. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[3]:

---

[2] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բիտում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):*

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

(…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[4]:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:*

2. Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը»:*

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական գործերի տարածքային ընդդատությունը որոշվում է հանցանքի կատարման վայրով: Տևող հանցագործության պարագայում օրենսդիրը կատարման վայր է դիտարկում այն տարածքը, որտեղ այն ավարտվել է: Ընդ որում, հանցանքը

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

որպես կանոն ավարտված է համարվում հանցավորի՝ իրավապահ մարմինների կողմից հայտնաբերման կամ մեղայականով ներկայանալու պահից:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Սաֆարյանին մեղսագրվում է, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք, այն բանի համար, որ նա, *«(…) համացանցի միջոցով Ռազմիկ Ոսկանյանից ստանալով մանկական պոռնկագրական նյութեր հանդիսացող՝ Արմեն Ռադիկի Ոսկանյանի և Ռազմիկ Ռադիկի Ոսկանյանի մասնակցությամբ արված տեսագրությունները, պահպանել է իր՝ համակարգչային համակարգ հանդիսացող «Samsung Galaxy A12» մոդելի (…) բջջային հեռախոսում (…)»:*

14.1. 2021 թվականի հուլիսի 15-ին Հ.Սաֆարյանը Կապան քաղաքի Գ.Նժդեհի փողոցի 22-րդ շենքի մոտակայքից բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Կապանի բաժին: Նույն օրը կատարված՝ Հ.Սաֆարյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է «Samsung Galaxy A12» մոդելի բջջային հեռախոս, որտեղ վերջինս պահպանել է մանկական պոռնկագրական նյութեր հանդիսացող տեսագրություններ, ինչն էլ դրվել է նրան ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքի հիմքում[5]:

15. Սույն որոշման 14-14.1 կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ սույն գործով Հ.Սաֆարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված ենթադրյալ հանցանքն ավարտվել է Սյունիքի մարզի Կապան քաղաքում, երբ վերջինս բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Կապանի բաժին: Այսինքն, Հ.Սաֆարյանին մեղսագրվող վերջին ենթադրյալ արարքն ավարտվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ՍԴ/0085/01/21 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Հովհաննես Սաֆարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, և 6-րդ կետերով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 142-րդ

---

[5] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 263-րդ հոդվածի 2-րդ մասով, ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ/0085/01/21 քրեական գործն ըստ մեղադրանքի Հովհաննես Պետրոսի Սաֆարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, և 6-րդ կետերով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 142-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 263-րդ հոդվածի 2-րդ մասով, ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ